

ԼԵՆԻՆՅԱՆ ԴՐՈՇ

ЛЕНИНСКОЕ ЗНАМЯ

ԱՆԳՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԶՐԵՎՈՐԱԿԱՆ ՕԿՐՈՒԳԻ ԹԵՐԹ ԳԱԶԵՏԱ ՅԱԿԱԲԱՅՏԿՈՂ ՎՈԵՆՈՂ ՕԿՐՈՒԳԱ ՈՒ ԱՐՄՅԱՆՍԿՈՄ ՅՅՅԵԸ

ՀԻՆԳԵԱՐԹԻ 14 ՀՈՒՆԻՍԻ 1951 թ. № 70 (1261)

ՍՊՐԵԼ ԵՎ ՍՈՎՈՐԵԼ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐՆԵՐ

Մտնելով Սովետական պետության Ձինված Ուժերի շարքերը, ուղղակի հանդիսավորապես երգվում է՝ լինել ազնիվ, բաշ, կարգապահ, աշխուրջ, խստորեն պահպանել պետական ու ուղղակի գաղտնիքը, անառարկելիորեն կատարել բոլոր զինվորական կանոնադրությունները եվ հրամանատարների ու պետերի հրամանները:

Գործելով այնպես, ինչպես կանոնադրություններն են պահանջում, Սովետական Բանակի ուղղակիները միշտ հաղթող են դուրս եկել մեր Հայրենիքի ազատության եվ անկախության համար մղված ամենադաժան գոտեմարտերում: 1918—1920 թվականներին դեռ նոր կազմակերպված Սովետական Բանակը փայլուն հաղթանակ տարավ ամերիկա - անգլիական ինտերվենտների նկատմամբ: Սովետական ուղղակիներն արժանավայել դաս տվեցին ճապոնական սամուրայներին Խալխին Գոլի եվ Խասան լճի մոտ, զլխովին շախչախեցին սպիտակ-ֆիննական հորդանները 1939—1940 թվականների դաժան մարտերում: Սովետական Ձինված Ուժերը համաշխարհային - պատմական հաղթանակ ձեռք բերեցին 1941 — 1945 թվականների Հայրենական Մեծ պատերազմում:

Հայրենիքի անկախության, պատվի եվ ազատության համար մղված մարտերում կողմնակից Սովետական Բանակի յուրաքանչյուր ուղղակի, որպեսզի պատվով կատարի իր սրբազան երդումը բուլշևիկյան պարտիայի զեկավարությամբ կոմունիզմ կառուցող սովետական ժողովրդի հանդեպ, պարտավոր է լավ իմանալ եվ անշեղորեն կատարել սովետական զինվորական կանոնադրությունները:

Այժմ, խաղաղ պայմաններում, կանոնադրությունների պահանջները ճշգրիտ կիրառումը միայն կարող է ապահովել մարտական ու քաղաքական ուսման լիակատար հաջողությունը:

Ժողովուրդների հանճարեղ առաջնորդ ընկեր Ստալինը Սովետական Բանակի ուղղակիների առաջ խնդիր է դրել՝ «... ամենախիստ կերպով կատարել կանոնադրությունների եվ կանոնադրությունների պահանջները, հրամանատարների եվ պետերի հրամանները, միշտ եվ ամենուրեք պահպանել օրինակելի կարգ ու կանոն, ամուր կարգապահություն եվ բարձր կազմակերպվածություն»:

Սովետական զինվորական կանոնադրությունները մշակված են մեծ առաջնորդ եվ ուսուցիչ ընկեր Ստալինի

անմիջական մասնակցությամբ եվ ղեկավարությամբ: Նրանք վառ կերպով արտացոլում են Վ. Ի. Լենինի եվ Ի. Վ. Ստալինի կողմից ստեղծված Սովետական Բանակի կառուցման հարուստ փորձը, Հայրենական Մեծ պատերազմի փորձը:

Բոլոր այն պահանջները, որ ուղղակիներն ներկայացնում են ՍՍՌՄ Ձինված Ուժերի կանոնադրությունները, մեր ժողովրդի պահանջներն են եվ լիովին բխում են սոցիալիստական մեր հզոր պետության շահերից:

Ինչ են պահանջում ուղղակից զինվորական կանոնադրությունները:

Ամենից առաջ սովետական զինվորական կանոնադրությունները ուղղակից պահանջում են կարգապահություն: «Ձինվորական կարգապահությունը կամ հասարակական կարգը խախտելու համար, — սովում է կարգապահական կանոնադրության 18-րդ կետում, — զինճառագոր պետք է նվազագույն կարգապահական ստուճի: Միաճամանակ կանոնադրությունները զինճառագոր պարտավորեցնում են անդու կերպով բարձրացնել մարտական եվ քաղաքական գիտելիքները, լինել ազնիվ եվ ճշմարտացի, միշտ բարձր գնահատել Ձինված Ուժերի մարտական փառքը, զինվորական պատիվը, աչքի լույսի պես պահպանել իր զորամասի Գրոշը:

Կանոնադրությունների այս եվ մյուս բոլոր պահանջների անշեղ կիրառումը միայն կապահովի յուրաքանչյուր զինվորի հայրենասիրական վեճ պարտքի կատարումը:

Պետք է նշել, որ այդ հանգամանք լավ են գիտակցում մեր օկրուգի առաջավոր ուղղակիներ Խոսրովյանը, Ռոբիտաշվիլին, Կարասեվը, Մամեդովը եվ շատ ուրիշներ: Նրանք ոչ միայն անրտորեն ուսումնասիրում են զինվորական կանոնադրությունները, այլ նաեվ խստորեն կենսագործում են կանոնադրությունների պահանջները: Իրենց ուսման եվ կյանքի ընթացքում նրանք ստուգիվ գործում են սովետական զինվորական կարգ ու կանոնին համապատասխան:

Այդպիսին պետք է լինի Մեծ Հոկտեմբերի ճնճող Սովետական Հայրենիքի պաշտպանության գիրքում կանգնած յուրաքանչյուր ուղղակի:

Ձինվորական կանոնադրությունների, զինվորական երդման պահանջների համաճայն սովորելն ու ապրելը ամեն մի ուղղակի վեճագույն խընդիրն է:

Ի. Վ. ՄԻՉՈՒՐԻՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

ՄԻՉՈՒՐԻՆԻ: Հունիսի 7-ին քաղաքի հասարակայնությունը նշեց ակադեմիո գիտնական Ի. Վ. Միչուրինի մահվան 16-րդ տարեդարձը:

Ի. Վ. Միչուրինի անվան պտղաբանչարքուճական ինստիտուտի նիստերի զահլիճում քաղաքի պարտիական, սովետական եվ գիտական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ կայացավ սգոհանդիսավոր նիստ:

Նիստի մասնակիցները հոտնկայս հարգեցին Ի. Վ. Միչուրինի հիշատակը:

Բնության վերափոխման ստալինյան պլանի իրականացման գործում միչուրինյան բիոլոգիական գիտության նշանակության մասին զեկուցումով

հանդես եկավ ինստիտուտի գիրեկտոր Բելոխոնովը: Ձեկուցողը հազորդեց, որ սովետական պտղաբույճները մեծ աշխատանք են կատարել Ի. Վ. Միչուրինի տեսական ժառանգության յուրացման ուղղությամբ, աճեցրել են պտղատու ծառերի եվ հատապտուղների հարյուրավոր արճեքավոր սորտեր:

Ի. Վ. Միչուրինի ստեղծած կենտրոնական գենետիկ յարքրատորիայի բազայի վրա Միչուրինսկում կազմակերպվել են գիտական հիմնարկներ եվ յարքրատորիաներ: Սովետական երկրում միչուրինյան սորտերի հիքրիդային ֆոնդում հաշվվում է ազելի բան 2 միլիոն բույս:



1951 թ. ՀՈՒՆԻՍԻ 10-ԻՆ ՄԵՍԿՎԱՅԻՄ ՈՒՅՎԵԾ Ա. Մ. ԳՈՐԿՈՒ ՀՈՒՅՈՐԾՆԵՐ

Ա. Մ. ԳՈՐԿՈՒ ՀՈՒՅՈՐԾԱՆԻ ԲԱՑՈՒՄԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

Մոսկվայում հունիսի 10-ին կայացավ ուսա մեծ գրող Ալեքսեյ Մաքսիմովիչ Գորկու հուշարձանի հանդիսավոր բացումը: Հազարավոր մոսկվացիներ հավաքվել էին Բելոռուսական կայարանի մեծ հրապարակի եվ նրան հարող լայն մադիստարայների ու նըրքափողոցների վրա: Ժամը 17-ն է: ՍՍՌՄ սովետական գրողների միության Գլխավոր քարտուղար Ա. Ա. Յազնեվը բացում է միտինգը:

— Մեծ Գորկու օրինակը, — ավարտելով իր ճառը հայտարարեց ընկ. Յազնեվը, — մեզ կոչ է անում մեր մեծ ուսուցիչ և առաջնորդ ընկեր Ստալինի ղեկավարությամբ անդու կերպով աշխատել կոմունիզմի մեճագույն պայճաք շենքի կառուցման վըրա: (Հրապարակի վրա թնդում է երկարատեղ օլացիան ի պատիվ ընկեր Ի. Վ. Ստալինի):

Ընկերներ: Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության Մինիստրների Սովետի անուճից բացում եմ ուսա մեծ գրող Ալեքսեյ Մաքսիմովիչ Գորկու հուշարձանը:

Ընկ. Յազնեվը կտրում է ժապավենը: Հուշարձանից ցած է իչնում քսպիտակ քաթանը: Հավաքվածների հայացքների առաջ վեր է խոյանում Ա.

Մ. Գորկու բրոնզե վեճ քանդակը: Գրողի հինգ մետրանոց ֆիգուրան կանգնեցված է բարձր պատվանդանի վրա, որը կերտված է կարմիր ողորկ գրանիտից: Պատվանդանի վրա ոսկե տառերով գրված են.

«Ռուս մեծ գրող Մ Ա Ք Ս Ի Մ Գ Ո Ր Կ Ո Ւ Ն Սովետական Միության Կառավարության կողմից 10 հունիսի 1951 թ.»

Հրապարակի վրա թնդում են ժափահարություններ: Կսվում է ՍՍՌՄ Պետական Հիմնի հանդիսավոր մեղեղին: Չեղքներին թարմ ժաղկեփնջեր հուշարձանին են մոտենում հարյուրավոր մոսկվացիներ ... ՍՍՌՄ սովետական գրողների միության անուճից ելույթ է ունենում գրող Ն. Ս. Տիխոնովը եվ ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի անուճից՝ ակադեմիկոս Վ. Վ. Վինոգրադովը:

Միտինգն ավարտված է: Մինչև ուշ գիշեր շղաղարեց մարդկային հոսանքը:

Հունիսի 10-ին տասնյակ հազարավոր մոսկվացիներ եղան Բելոռուսական հրապարակի զրոսապարկում:

ՍՐԲՈՒԹՅԱՄԲ ԿԱՏԱՐԵԼ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Զինվոր Վորոնկոն, առանց շտապելու, խրամատավորվում էր ճամփի մոտերում: Նրանից ոչ հեռու դասավորվել էր շարքային Կրուզիկովը, որն արդեն սարքավորել էր իր փոքրիկ խրամատը:

— Զարծե՛ք զուլս ցավացնել, — կատակեց նա մտերիմ ընկերոջ հետ, — չէ՛ որ մենք ռազմաճակատում չենք գտնվում: Մեր «Քյնամու» տանկերից կարելի է շփախենալ:

Այդ պահին ճամփով սլացավ մի ծանրաբեռնաված ապրանքատար մեքենա: Հողի ցնցումից Վորոնկոյի անփութորեն փորված խրամատը փրկվեց...

— Եթե այս դեպքը պատահեր մարտական պայմաններում, — ասաց զինվորներին մտացող սերժանտը, — թըշնամու տանկը Վորոնկոյին կճգմեր: Ծավը նրանումն է, որ Վորոնկոն խրամատը փորեց մի կերպ, ոչ ըստ կանոնադրության: Իսկ դուք, Կրուզիկով, խախտեցիք կանոնադրությունը: Զէ՛ որ նրա մեջ ասվում է, որ ռազմադաշտում պետք է ընկերոջը օգնել: Սակայն դուք փոխանակ ձեր ընկերոջը ցույց տալու, թե ինչպես պետք է ճիշտ խրամատավորվել, փոխանակ նրան շտապեցնելու, սկսել եք հանարներով զբաղվել...

Զինվորական կանոնադրությունների ճիշտ եմ անշեղ կատարումը ռազմիկների հաջողությունների պարտադիր պայմանն է մարտական ու քաղաքական պատրաստության գործում: Մեր կանոնադրությունները հանդիսանում են ռազմական օրենքների ժողովածու, որը կարգավորում է զորքերի ուսուցումը եվ դաստիարակությունը, կյանքըն ու կենցաղը: Կանոնադրությունը, — սովորեցնում է ընկեր Ստալինը, — դա հրաման չէ, որը կարճատեղ ժամկետի ուժ ունի: Կանոնադրությունը — դա Կարմիր Բանակի համար երկար տարիների օրենքների ժողովածու է...

Կանոնադրությունները մեծ նշանակություն ունեն զորքերի մեջ կարգ ու կանոն, կարգապահություն, կազմակերպվածություն պահպանելու համար: Իսկ կազմակերպվածությունը մեծ ուժ է: Վ. Ի. Լենինը ասում էր, որ հարյուրի ուժը կարող է գերազանցել հազարի ուժին, երբ հարյուրը կազմակերպված է, կազմակերպվածությունը տասնանպատկում է ուժերը:

Հայրենական Մեծ պատերազմը ավարտվելուց հետո մեր բանակի մեջ մտցվեցին մի քանի նոր կանոնադրություններ՝ ներքին ծառայության կանոնադրություն, Կարգապահական կանոնադրություն եվ ուրիշներ: Նրանք բոլորը հիմնված են ստալինյան ռազմական հաղթական գիտության վրա, նրանց մեջ ամփոփված է աշխարհիս ամենաառաջավոր մեր բանակի ամենահարուստ ռազմական փորձը:

Այս բոլոր կանոնադրությունների պահանջներն ուղղված են Սովետական Բանակի մարտունակության հետագա բարձրացմանը: Դրա համար ամեն մի ռազմիկ պարտավոր է համառոտն ուսումնասիրել կանոնադրությունները, խոր կերպով գիտակցել այդ կանոնադրությունների պահանջներով սահմանված կարգ ու կանոնի խիստ կատարման անհրաժեշտությունը: Ռազմիկը, որը գիտի կանոնադրությունը, որը եռանդուն կերպով կատարում է նրա պահանջները, նա միշտ կհանդիսանա որոշման, կգործի սեփական նախաձեռնությամբ, ինչ էլ ուզում է լինի, կկատարի հրամանատարի հրամանը:

Կանոնադրությունների ու հրահանգների եռանդուն կերպով կատարելու անհրաժեշտության մասին քանիցս նշել է ընկեր Ստալինը: Հրամաններից

մեկում նա պահանջել է՝ ամենախիստ կերպով կատարել կանոնադրությունների կանոնադրությունների պահանջները, հրամանատարների եվ պետերի հրամանները, միշտ և ամենուրեք պահանջ օրինակելի կարգ ու կանոն, ամուր կարգապահություն եվ բարձր կազմակերպվածություն:

Կատարել սովետական ռազմիկի եվ Սովետական Բանակի նկատմամբ ստալինյան հոգատարությունը տողորված կանոնադրությունների պահանջները՝ դա նշանակում է ամբողջ կյանքը եվ ուսուցումը կառուցել նրանց պահանջներին լրիվ համապատասխան:

Կանոնադրություններում պարզորոշ սահմանված են ռազմիկի իրավունքներն ու պարտականությունները: Զինվորի պարտքն է սրբորեն եվ անխախտելիորեն պահպանել այդ պարտականությունները՝ լինել ազնիվ եվ ճշմարտացի, հմտորեն կատարել իր պարտականությունները ծառայության գծով, մշտապես կատարելագործել իր ռազմական եվ քաղաքական գիտելիքները, լինել զգոն, խստորեն պահպանել ռազմական և պետական գաղտնիքը: Ռազմիկը պետք է խնամի իր զենքը, ռազմական եվ ժողովրդական գույքը, ընկերներից օգնի խոսքով եվ գործով, նրանց ետ պահի անվայել արարքներից եվ, կյանքը շխնայելով, վտանգի պահին նրանց փրկել:

Կանոնադրությունները հասակորեն սահմանում են, թե ինչը պետք է յուրացնի զինվորը պարապմունքների ժամանակ, թե ինչպես պետք է պահպանի զենքը, կրի օրվա վերակարգի ծառայությունը, ինչպես պահպանի հանդերձանքի ձեռքը:

Գիտենալով եվ անբասիր կերպով կատարելով կանոնադրությունների այս բոլոր պահանջները, ամեն մի զինվոր կարող է լինել մարտական եվ քաղաքական պատրաստության գերազանցիկ: «Գործիք կանոնադրություն համաձայն — կղանաս պատվի ու փառքի արժան», — ասում է զինվորական ասացվածքը:

Կանոնադրությունը մի անգամ կարգվել էր դա դեռ չի նշանակում այն ուսումնասիրել: Որպեսզի գերազանցորեն գիտենալ կանոնադրությունների պահանջները, անհրաժեշտ է կանոնադրություններն ուսումնասիրել խորը կերպով, մշտապես, նորից ու նորից կրկնել ուսումնասիրածը:

Մարտական պատրաստության գործում հաջողությունների կարեկորություն պայման է հանդիսանում է պարապմունքների իրադրության առավելագույն մերձեցումը ժամանակակից մարտերի իրադրությանը: Ամեն մի

պարապմունքի ժամանակ զինվորը պարտավոր է գործել ըստ կանոնադրության, խուսափել պայմանականություններից ու պարզեցնելուց, սովորել այն, ինչ անհրաժեշտ է մարտում, գործել այնպես, ինչպես ռազմադաշտում: Այս կանոններից նահանջելը վիթխարի վնաս է հասցնում մարտական ուժանքը:

Միայն եւ թույլ տալիս այն ռազմիկները, որոնք կարծում են, թե կանոնադրությունների պահանջները պետք է միմիայն կատարել պարապմունքների ժամանակ, շարքում: Ամենուր եվ միշտ սովետական ռազմիկը պետք է գործի այնպես, ինչպես թևադրում են ռազմական կանոնադրությունները, ինչպես պահանջում է զինվորական պարտքը:

Զինվորական կանոնադրությունների խիստ պահպանման գործում մեծ պատասխանատվություն է ընկած կոմունիստների վրա: «Մասսաների մեջ կոմունիստները, — ասվում է Ա. Պոպովի «Պողպատ եվ խարամ» վեպում, — նույնն են, ինչ ածխածնի մասնիկները երկաթի մեջ, մասնիկներ, որոնք երկաթը վերածում են պողպատի»: Այդպես էլ բանակային բոլշևիկները ցեմենտավորում են զորամասերի եվ ստորաբաժանումների անձնակազմը, միաձուլում են ռազմիկներին, նրանց ոգեշնչում են հաջողություններ ձեռք բերել մարտական եվ քաղաքական ուժման գործում: Կոմունիստը պարտավոր է անձնական օրինակով ցույց տալ, թե ինչպես պետք է կատարել կանոնադրությունների պահանջները, թե ինչպես պետք է պայքարել զինվորական կյանքի նույնիսկ ամենափոքր խախտումների դեմ:

Ամերիկա - անգլիական իմպերիալիստները պատերազմի պատրաստությունից անցել են արյունոտ ագրեսիայի, համաշխարհային նոր պատերազմի բորբոսման ուղղակի ակտերի: Դա մեր ժողովրդին պարտավորեցնում է մշտապես պահպանել բարձր զգոնություն:

Սովետական Բանակը, որը ծնվել է ժողովրդի ծոցից, հուսալիորեն պահպանում է ՄՍՄԲ-ի պետական շահերը: Զինվորական կանոնադրությունների խստորեն պահպանումը ամեն մի ռազմիկի համար ապահովում է բարձր ցուցանիշներ մարտական եվ քաղաքական պատրաստության բնագավառում, ապահովում է կոմունիզմ կառուցողների խաղաղ, ստեղծարար աշխատանքի զինված պաշտպանի պարտականությունների գերազանց կատարումը:

Փոխգնդապետ Մ. ԽՅԻՆ



Ավագ սերժանտ Մատիմ Ռուստամովը շատ ժամանակ է հատկացնում իր սպորտային ունակությունների կատարելագործմանը: ԵԿԱՐՈՒՄ. — Ավագ սերժանտ Մատիմ Ռուստամովը վարժություններ է կատարում: Յոտո Ա. ՉԵՐՆԵՆԿՈՅԻ

Ա Ռ Ա Ջ Ա Վ Ո Ր Ի ՕԳՆՈՒԹՅԱՄԲ

Զինվոր Ս. Գրիգորյանը դեռ պատանի հասակում սիրում էր ֆիզկուլտուրան եվ շանասիրարար զբաղվում էր սպորտով: Այժմ Գրիգորյանը հանդիսանում է մեր ստորաբաժանման լավագույն ըսպորտսեններինից մեկը: Նա ամեն օր ազատ ժամերին գնում է ֆիզկուլտ հրապարակը եվ այնտեղ սպորտային գործիքների վրա մարզում իր մկանները:

Ռազմիկ Գրիգորյանն ընկերական օգնություն է ցույց տալիս նաեվ այն զինվորներին, որոնք ետ են մնում ֆիզիկական պատրաստությունում: Եթե զինվոր Սրմակովը մի ժամանակ դժվարանում էր ազատ գործել ֆիզկուլտ գործիքների վրա, ապա նա այժմ իր ընկերոջ օգնության շնորհիվ զգալի կերպով առաջադիմել է:


Լավագույն ֆիզկուլտուրիկներից է դարձել նաեվ ռազմիկ Կանդիլյանը: Նրանք զինվոր Գրիգորյանի օգնությամբ այժմ հանձնում են «ՊԱՊ» կրծքանշանի նորմաները: Շաբաթային Հ. ՔՈՉԱՐՅԱՆ

ԿՈՓՎՈՒՄ ԵՆ ՅԻԶԻՎԱԳԵՍ

Ն ստորաբաժանումում օրավուր ամուսն են առաջավոր ֆիզկուլտուրիկների շարքերը: Այստեղ հաճախ կազմակերպվում են սպորտային մրցություններ եվ ֆիզկուլտուրային զանազան խաղեր: Լավագույն ֆիզկուլտուրիկներից են ռազմիկներ Առուշանյանը, Տապարյանը եվ Հախվերդյանը: Նրանք անընդհատ կատարելագործում են իրենց սպորտային վարպետությունը, վարժություններ կատարելով պտուտածողի եվ զուգափայտի վրա: Գ. ԲԵՂԱՐՅԱՆ

ՍԻՍԵՄԱՏԻԿ ԶԲԱՂՄՈՒՆՔԻ ԱՐԴՅՈՒՆՔԸ

Մեր ստորաբաժանման ռազմիկները սիստեմատիկաբար զբաղվում են սպորտով եվ հանձնում «ՊԱՊ» կրծքանշանի նորմաները: Հանգստյան օրը մեզ մոտ կազմակերպվեցին սպորտային մրցություններ: Ռազմիկներ Գ. Խաչատրյանը եվ Կ. Սերբոյանը 3 կիլոմետր տարածություն անցան 9 րոպեում: Նրանք պատրաստվում են հանձնել երկրորդ աստիճանի «ՊԱՊ» կրծքանշանի նորմաները: Զինվոր Մ. Խաչատրյանը երկարությամբ թռիչքի գծով զբաղվեց առաջին տեղը: Նրա արդյունքն է 5,28 մետր: Զինվոր Ռ. Մարտիկյանը նույնպես նետեց 65 մետր եվ նույնպես առաջնություն շահեց: Կրտսեր սերժանտ Ե. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ



Եֆրեյմով Ի. Ռաչարովը ստորաբաժանման լավագույն զենացրորդներից է: Նրա լուսանկարը փակցված է զորամասի գերագնացիկների Պատկերասրահում: ԵԿԱՐՈՒՄ. — Եֆրեյմով Ի. Ռաչարովը կրակադիրում ստուգում է զրն-Յոտո Ի. ԳՈՐԲԱՏՅՈՒՆԻ

ԳՈՐԾԵՑԻՆ ԱՅՆՊԵՍ, ԻՆՉՊԵՍ Մ Ա Ր Տ Ո Ւ Մ

Գերակենտրոն ծառայության ավագ սերժանտ Ալեքսանդր Մաճարամովը ջոկի գլխավորները եռանդուն կերպով խրամատավորվում են պատրաստվում էին զրոհի...

— Ընկեր ավագ սերժանտ, կրակադիրքը պատրաստ է, — առաջինը գնկուցեց շարքային Ջ. Ալեքսանդր:

Հրամանատարը մոտենավ իր ենթակային: Նա խրամատը գիտեցուց հետո պաշտակալից հանեց Հետեմովի մարտական կանոնադրությունը եվ մեկնեց Ալեքսանդրին:

— Կարգացե՛ք, — ասաց նա:

— Հասկացա, ընկեր ավագ սերժանտ: Ես մոտեցնել եմ քողարկման մասին:

— Ծիշտ աշխատե՛ք: — Կարող ես նույն ասաց ջոկի հրամանատարը: — Մի՛ թե քողարկումը դուք փոքր բան եք համարում: Կատ քողարկված խրամատը հակառակորդի համար հրաշալի թիրախ է:

Ջինվոր Ալեքսանդր խնդրեց սկսեց տեղանքին համապատասխան քողարկել իր խրամատը:

— Իսկ դուք, ընկեր շարքային Շիրինով, ինչու՞ գնդացիք չեք հանում պատասխանից:

— Անձրեմ է դալիս, ընկեր ավագ սերժանտ: Բացի դրանից, ավագի հատիկները կորոզ են փողի մեջ լցվել, — փորձեց արդարանալ Ջինվորը:

Ճակատային խիստ դպրոցն անցած հրամանատարը հանկարծակիի բերելով իր ենթակային, հրամայեց.

— Աչքից զրոհում է «հակառակորդը», կրակ...

Ջինվոր Շիրինովը, որ բոլորովին չէր պատրաստ նման հրամանի, մի պահ շփոթվեց եվ գնդացիքը մարտի բերեց բավականին ուշացումով:

— Ի՛նչ կլինե՞ր ջոկի գրությունը, եթե այս դեպքը պատահեր իսկական մարտում, — ասաց Մաճարամովը եվ իր ենթակային հիշեցրեց այն մասին, որ ուսման խաղող ժամանակ պետք է սովորել գործել ճիշտ այնպես, ինչպես պահանջվում է իսկական մարտում:

Այնուհետև նա պատմեց, թե ինչպես Հայրենական Մեծ պատերազմի ահեղ օրերին Սովետական Բանակի ռազմիկները բոլոր պայմաններում աչքի լույսի պես էին պահպանում իրենց գնդը եվ հերոսական սիրազործություններ կատարում:

— Ցուրաբանչուր ռազմիկի համար, — ասաց նա, — թանկ է այդ գնդը: Զե՛ որ այն պատրաստել են մեր հայրերն ու եղբայրները, որոնք մեզ վստահել են պաշտպանել Մեծ Հոկտեմբերի նվաճումները: Զենքը ռազ-

միկի պատիվն է, որ մարտական ընկերը, սիրիք այն եվ ճիշտ սարքին վիճակում պահիր: Գրանով դու ավելի կամրապնդես քո ջոկի եվ ստորաբաժանման մարտական պատրաստակալությունը:

Սակավաթիվ ռազմիկներ էին մնում մինչև զրոհի սկսվելը: Հմուտ ու փորձառու հրամանատարը ավելորդ չհամարեց մեկ անգամ եվս ստուգել իր ենթակային գիտելիքները, թե ով ինչպես է հասկացել խնդիրը: Նա գինվորներին հիշեցրեց, որ պատերազմի դաշտում հրամանը ճիշտ չհասկանալը կամ ժամանակին չկատարելը կարող է վատ հետեմականների հանգեցնել:

— Եթե որեվէ անհասկանալի բան է մնում, — ասաց ավագ սերժանտ Մաճարամովը, — գինվորն առանց քաշվելու պետք է դիմի հրամանատարին եվ մինչև վերջը պարզի այն, ինչ որ կատարելու է:

... Տրվեց զրոհի ազդանշանը: Ջոկի ռազմիկները կայծակնային արագությունով դուրս թռան իրենց խրամատներից եվ առաջ ընթացան: Որոշ տարածություն անցնելուց հետո ավագ սերժանտը Մաճարամովը հրամայեց.

— Թողնե՛ք:

Ռազմիկներն անմիջապես ետ վերադարձան իրենց նախկին կրակագիծերը:

— Ինչու՞ եք ետ մնում, — հարցրեց նա շարքային Մուստաֆանին:

— Հոգնած եմ, ընկեր հրամանատար, — պատասխանեց Մուստաֆանը:

— Դուք կարգացե՛ք: Եթե Սովետովի մասին:

— Այո՛, կարգացել եմ:

— Ռուս մեծ զորավարն իր ժամանակին ասել է՝ «Եթե ասված է՝ առաջ, ապա ես չգիտեմ ինչ է հոգնածությունը, ցուրտը եվ քաղցը»: Ծիշտ այդ սկզբունքով պետք է գործենք նաև մենք, Սովետական Բանակի ռազմիկներս:

Հետո երբ կրկնվեց զրոհի ազդանշանը, բոլոր գինվորներն էլ գործեցին վարժ ու հմուտներ, ճիշտ այնպես, ինչպես պահանջում է Հետեմովի մարտական կանոնադրությունը:

Գերակենտրոն ծառայության ավագ սերժանտ Ա. Մաճարամովի անցկացրած դաշտային այս ուսանելի պարապմունքը, որը լրիվ կերպով մոտենցված էր մարտական իրականությանը, շատ բան տվեց ռազմիկներին:

Մ. ՀՐԱԶՅԱՆ

ԳԵՐԱԶԱՆՑԻԿՆԵՐԻ ԶՈՎԸ

Կոմերիտական կրտսեր սերժանտ Ա. Զանիկյանի ջոկի բոլոր ռազմիկներն իրենց մասնագիտության վարպետներ են: Այդ արդյունքին նրանք հասել են ջոկի հրամանատարի խելամիտ դաստիարակության շնորհիվ:

Զանիկյանն իր ենթակայիններին սովորեցնում է գործել այնպես, ինչպես պահանջում են գինվորական կանոնադրությունները: Կոմերիտական Ա. Զանիկյանը գինվորներին դաստիարակում է սովետական հայրենասիրության ոգով, նրանցից պահանջում է անթերի տիրապետել գինվորական գործին:

Հոգատար, մտածված աշխատանքի շնորհիվ Ա. Զանիկյանի ջոկը դարձել է մարտական ու քաղաքական ուսման գերազանցիկ:

Ջոկը մի քանի օր եռանդուն կերպով պատրաստվում էր հրաձգության: Կոմերիտական Ա. Զանիկյանը կրա-

կային պատրաստության կանոնադրեց համապատասխան գույները էր բացատրում ռազմիկներին, ստուգում էր նրանց գիտելիքները, բացահայտում եվ ուղղում էր թերությունները:

Ջոկը հրաձգարանումն է: Կրակագործին են մոտենում շարքայիններ Ի. Ծկոնիան եվ Գ. Վարտանովը: Կանոնադրության համաձայն, ռազմիկներն ընդունում են մարտական գրություն եվ կրակ արձակում հեռվում երկվայցիկ թիրախներ վրա... Բոլոր թիրախները խոցված են: Ջոկի մնացած ռազմիկները կրակային խնդիրը նույնպես կատարում են գերազանց եվ ստորաբաժանման հրամանատարից շնորհակալություն ասանում:

Այժմ կոմերիտական Ա. Զանիկյանի ջոկի ամբողջ անձնակազմի նկարը փակցված է ստորաբաժանման առաջավորների Պատվոտախտակին:

Վ. ԱՆԲՍՅԱՆՅԱՆ

ՈՒՋՄԻԿՆ ԱՐԺԱՆԱՅԱՎ ԱՐԶԱԿՈՒՐԴԻ

Շարքային Պենդիկյանը պատվով է կրում գինվորական ծառայությունը: Նա աշխատում է որպես դերձակ եվ բարեխղճորեն է կատարում իր պարտականությունները: Ռազմիկը, սակայն, չի մոռանում իր հիմնական խնդիրը՝ լրջորեն զբաղվում է մար-

տական եվ քաղաքական պատրաստությամբ:

Ստորաբաժանման հրամանատարը շարքային Պենդիկյանին ուսման եվ կարգապահության գերազանց ցուցանիշների համար արժանացրեց տնային արձակուրդի:

Շարքային Հ. ԱՅՎԱԿՅԱՆ



Իր պարտքը Հայրենիքի հանդեպ ազնվորեն է կատարում կոմերիտական Ն. Գամբարովը: ՆԿԱՐՈՒՄ.— Շարքային Ն. Գամբարովը դաշտային պարապմունքներում: Յոտո Ա. ՉԵՐՆԵՆԿՈՅԻ

ԲԱՐՁՐ ԿԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ

(Նամակների տեսություն)

Սովետական ռազմիկները բարձր հայրենասիրության սրանչիլի օրինակներ են ցույց տալիս: Խանդավառված սոցիալիստական Հայրենիքի մեծաույն հաջողություններով եվ մեր ժողովրդի անձնուրաց սխրություններով, ռազմիկները հաղթահարում են բոլոր դժվարությունները եվ մեծաույն եռանդով տիրապետում մարտական տեխնիկային:

Սովետական ռազմիկները շանք ու եռանդ չեն խնայում կատարելագործելու իրենց գիտելիքները, գառնալու անվերջ հրաձգության վարպետներ, բարձր պահելու սովետական գինվորական կարգապահությունը: Ահա թե ինչ է գրում գինվորակից Ռ. Գասպարյանը.

«Մարտական ու քաղաքական ուսման մեջ ձեռք բերած հաջողությունների համար շարքայիններ Յանջանյանը եվ ուրիշներ պարզեցվածությամբ գովասանագրում: Այդ առթիվ գինվոր Սանջանյանը իր ընկերներին ասաց. «Ինչ համար մեծ բախտավորություն է ծառայել սովետական Հայրենիքին: Ես այսուհետև կրկնապատկված եռանդով կուսումնասիրեմ ռազմական գործը»:

Ջինվորակից Հ. Համբարձումյանը հաջողում է.

«Ջինվոր Մեսրոբյանը նպատակ դրեց դանակ մարտական ու քաղաքական ուսման գերազանցիկ: Կոմերիտական ռազմիկն օրն ի բուն աշխատում էր անդադրում, հաճախ գիմում էր ընկերների օգնությանը, նրանցից խորհուրդներ հարցնում: Մեսրոբյանը խոր կերպով ուսումնասիրեց իր զենքի նյութական մասը եվ հրաձգության կանոնները»:

Ամենատրախալին եվ բնորոշն այն է, որ մեր ռազմիկները լիովին գիտակցում են իրենց դերը սոցիալիստական Հայրենիքի ազատությունն ու անկախությունը պաշտպանելու վեճ գործում: Նրանք ձգտում են ավելի բարձր ցուցանիշներ:

Խոսելով իրենց ստորաբաժանման առաջավոր ռազմիկների մասին, գինվորակից Հ. Փուրմենյանը գրում է.

«Մարտական ու քաղաքական պատրաստության գերազանցիկ Ս. Մարգարյանը խելամտորեն է օգտագործում իր ամեն մի ազատ րոպեն, ուսումնասիրում է քաղաքական ու տեխնիկական գրականություն, զբաղվում է ֆիզկուլտուրայով: Կարված ուսուցումը, ժամանակի ճիշտ դասավորումը նրան հնարավորություն տվին գառնալ ստորաբաժանման ամենաառաջավոր ռազմիկը»:

«Ուսման առաջավոր կոմերիտական Թոթյանը, — գրում է ընկ. Առուսյանը, — իր հրաշալի մեքենան պահում է մշտական պատրաստ վիճակում: Նրա մեքենան խափանումներ չի տալիս»:

Ջենթին տիրապետելու, մասնագիտության մեջ խորանալու, գործողու-

թյունները ավտոմատիզմի հասցնելու ձգտումը վառ է ապրում ամեն մի ռազմիկի մեջ:

«Ջինվոր Մարտիկյանը համառորեն տիրապետում է իր զենքին, կրակում է անվրեպ: Նա գերազանց գիտեց զենքի նյութական մասն ու փոխադրությունները: Բացի դրանից, նա խորապես ուսումնասիրում է հրաձգության կանոնները, սխտեմատիկ վարժությունների օգնությամբ իր գործողությունները հասցրել է ավտոմատիզմի: Նրա զենակը չի վրիպում», — գրում է գինվորակից Լ. Բարսեղյանը:

Ստորաբաժանումների հրամանատարներն ամենուրեք խրախուսում ու քաջալերում են ռազմիկների հաջողությունները մարտական ու քաղաքական ուսման մեջ:

«Ռազմիկ Սարգսյանը պահպանելով ծառայությունը աշխրջորեն եվ անթերի կատարելու համար, — գրում է գինվոր Ս. Արզումանյանը, — շնորհակալություն ասացավ: Հրամանատարը նամակ գրեց Սարգսյանի ծնողներին եվ նրանց շնորհակալություն հայտնեց հայրենասեր ռազմիկ դաստիարակելու համար»:

Գաշտային պարապմունքներում գինվորների հմուտ գործողությունների մասին է պատմում գինվոր Ա. Ամիրխանյանը:

«Ռազմիկներ Վ. Կարապետյանը եվ Ա. Հայրապետյանը պարապմունքի ժամանակ երևվան բերեցին ձեռներեցություն, գովելի ճարակություն եվ սերժանտի հրամանները կատարելու փութաշունություն: Նրանք բոլորից շուտ էին խրամատավորվում, անթերի քողարկում իրենց դիրքերը»:

Ջինվորակից Գ. Մկրտչյանը գրում է առաջավոր ռազմիկ կոմերիտական Ասլանյանի մասին, որն իր փութաշուն ծառայության համար բազմիցս խրախուսանքի է արժանացել:

Սովետական ռազմիկի հոգեկան ու բարոյական սրանչիլի հատկությունների մասին է պատմում գինվորակից Ա. Հարությունյանը:

«Ընկ. Շահմանյանը — գրում է նա, — պարտավորություն էր վերցրել նորոգման առաջադրանքը կատարել 250 տոկոսով: Ջինվոր կոմերիտականին հատուկ ազնվությամբ իր խոստումը միշտ գործի է վերածում: Նա իրեն արված առաջադրանքը ժամկետից երեք օր շուտ կատարեց»:

Հայրենիքը մեր ռազմիկներից պահանջում է ազնվորեն կատարել գինվորական երդումը, լինել կարգապահ, գերազանց տիրապետել ռազմական գիտելիքներին, աշխուրջ կերպով պահպանել կոմունիզմ կառուցող սովետական ժողովրդի խաղաղ, ստեղծարար աշխատանքը:

Ա. ՄԿՐՏՅԱՆ

Ռուս ժողովրդի հանճարեղ զավակ Վիսսարիոն Գրիգորևիչ Քելինսկին ծնվել է 1811 թվականի հունիսի 13-ին Սվեաբորգում, բժշկի ընտանիքում: 1816 թվականին փոքրիկ Վիսսարիոնի հայրը իր ընտանիքով ամբողջովին տեղափոխվում է Պենզայի նահանգի Զեմբարա (այժմ Քելինսկի) քաղաքը: 1825 թվականին նա մտնում է Պենզայի գիմնազիան: Բնկուղ սուղ կարիքի մեջ է լինում, բայց եվ այնպես նրա հույսերը կամքը, նպատակի պարզությունը հաղթահարում են կյանքի դժվարությունները, ու նա անդադար կարդում է, կարդում, թափանցում գիտության խորքերը, հարստացնում իր գիտելիքները: Նա չափազանց շատ էր սիրում ռուս գրականությունը:

1829 թվականին նա գնում է Մոսկվա եվ ընդունվում Մոսկվայի համալսարանի լեզվագրական ֆակուլտետը: 1830 թվականին համալսարանի մի խումբ ուսանողներ Քելինսկու գլխավորությամբ կազմակերպում են փիլիսոփայական-քաղաքական խմբակ, ուր քննարկում էին քաղաքական, փիլիսոփայական եվ գրական հարցեր: Ասանող Քելինսկին այդ խմբակում ընթերցում է իր «Գիմնազիայի կալիսին» շրջան: Քելինսկին Գիմնազիայի կալիսինի շուրջներով անարգանքի սյունին է դամում կալվածատերերին, որոնք անխնայ կերպով շահագործում էին ճորտերին, նրանց ծախում եվ նրանցից խլում ամենաթանկագինը՝ աղատությունը:

Համալսարանի դեկավորությանը դուր չեկավ Քելինսկու ապստամբ ուղին: 1832 թվականին Քելինսկին վերտարվեց համալսարանից: Սակայն նա չի ընկճվում: 1833 թվականի գարնանը նրան հաղորդվում է աշխատել «Տեխնիկոս» ամսագրի խմբագրությունում: Ամսագրում նա տպագրում է իր առաջին մեծ հոդվածը: Այդ հոդվածում վառ կերպով արտահայտվեցին երիտասարդ քննադատի քաղաքական, փիլիսոփայական եվ գրական հայացքները: Քելինսկին ասում է, որ արվեստը պետք է առնչի կյանքի հետ: Արվեստը չի սիրում շինծու բան: Գյանքը պետք է պատկերել ինչպես որ կա: Արվեստը պետք է արտացոլի ժողովրդի սիրտը, նա չպետք է կտրված լինի ժողովրդական բանահյուսությունից: Ու Քելինսկին պահանջում է ստեղծել իսկական ժողովրդական գրականություն: Այդ եվ այլ հոդվածներում նա խարազանում է բոլոր ներքանց, ովքեր կուրորեն ծունկի էին գալիս բուրժուական կուլտուրայի առաջ, «կապիկի նման» ընդօրինակում այդ նեխվող հակաժողովրդական կուլտուրան:

Ծանապարհորդելով արտասահմանյան մի շարք երկրներ, ծանոթանալով կապիտալիստական երկրներում տիրող կարգերին, Քելինսկին վճռականորեն հանգում է այն կարծիքին, որ կապիտալիստները երբեք չեն կարող լինել հայրենասեր, որ նրանք միմիային իրենց գրպանի եվ որովայնի մասին են մտածում, որ կապիտալիստները հայրենիքից, խղճից, պատվից զուրկ մարդիկ են: Քելինսկին հանգեց



այն եղրակացության, որ միմիայն սոցիալիզմը կարող է փրկել մարդուն աղքատությունից ու ստրկությունից, որ միմիայն սոցիալիզմի ժամանակ կլինի իսկական եղբայրություն եվ հավասարություն:

Դեռ այն ժամանակ Քելինսկին ատում էր Ամերիկայի Միացյալ Նահանգների կեղծ քաղաքակրթությունը: Նա ասում էր, որ այնտեղ բարոյականություն, մարդասիրություն գոյություն չունի, այնտեղ իշխում են սուտը եվ ոսկին:

Քելինսկին մահացավ 1848 թվականի հունիսի 7-ին:

Նա գրել է 130-ից ավելի հոդվածներ, ունեցել իր սեփական առաջինն էր, որ կարողացավ ճիշտ գնահատել Պուշկինի, Գրիգորևիչի, Կրիլովի, Գոգոլի, Լեմոնտովի ստեղծագործությունները: Նա համարում էր այդ գրողների գործերով, որովհետև նրանց մեջ կյանք կա, նրանք բխում էին ժողովրդի սրտից, արտահայտում ժողովրդի իդեալն ու երազանքները:

Քելինսկին թանկ է մեզ համար որպես մեծ, հանճարեղ գրական քննադատ, որպես ռեվոլյուցիոն - գեմոկրատ, որպես բարձր քաղաքական արվեստի մարտնչող: Թանկ է, որովհետև նա եղել է մեր Հայրենիքի մեծ զավակը, նա հավատացած էր, որ իր Հայրենիքը ապագայում կկանգնի կրթված աշխարհի գլուխը, ուղիներ կնշի գիտության եվ արվեստի համար, ու կհարգվի ամբողջ լուսավոր մարդկության կողմից...

Քելինսկու մարգարեական խոսքերն իրականացան: Ռուսաստանը դարձավ սոցիալիզմի Հայրենիք, իսկ ռուս ժողովուրդը դարձավ ազգերի եղբայրական, համերաշխ ընտանիք գարբնող ժողովուրդ:

Քելինսկու ստեղծագործությունը հարգատեղի է սովետական բոլոր ժողովուրդների համար: Սովետական Հայրենիքը միշտ սիրով ու հարգանքով է պահում ռուս մեծ ժողովրդի տաղանդավոր զավակի հիշատակը:

Ոստիկ ԿԱՐԱԿՈՉՅԱՆ

Գ Ա Ն Չ Ա Ն Ա Յ Ս Օ Ր


Մարտական ու քաղաքական ուսման գերազանցիկ Մ. Արզախյանը վերադարձավ կարճատեղ արձակուրդից: Նա գրույց կազմակերպեց ստորաբաժանման ուսանողների համար, պատմեց Վրացական ՍՍԹ Բողոքականության Գանձա գյուղի նվաճումների մասին:

Յուրաքանչյուր կոլխոզնիկ, — ասաց Մ. Արզախյանը, — անցյալ տարի ստացել է մեծ քանակությամբ հացահատիկ եվ կաթնամթերք, վայելում է ունեվոր ու կուլտուրական կյանք: Նավթի լավագույն փոխարինել են Իլիչի լավագույնը: Փողոցները ծառազբոսով են: Գյուղի կենտրոնում կառուցված է սկուլար, որտեղ կոլխոզնիկներն իրենց հանգստյան ժամերին լսում են ուսուցիչ-աղագրողների սովետական Հայրենիքի նորանոր հաղորդությունները:

Քելինսկու մարգարեական խոսքերն իրականացան: Ռուսաստանը դարձավ սոցիալիզմի Հայրենիք, իսկ ռուս ժողովուրդը դարձավ ազգերի եղբայրական, համերաշխ ընտանիք գարբնող ժողովուրդ:

Քելինսկու ստեղծագործությունը հարգատեղի է սովետական բոլոր ժողովուրդների համար: Սովետական Հայրենիքը միշտ սիրով ու հարգանքով է պահում ռուս մեծ ժողովրդի տաղանդավոր զավակի հիշատակը:

Ջիեվոր Մ. ԱՎԵՏԻՍՅԱՆ



Дисциплинарный устав обязывает каждого военнослужащего: оказывать уважение начальникам и старшим, строго соблюдать правила воинской вежливости и отдания чести.

Կարգապահական կանոնադրությունը յուրաքանչյուր զինծառայողի պարտավորեցնում է հարգանք ցույց տալ պետերին եվ ավագներին, խստորեն պահպանել զինվորական քաղաքավարության և պատիվ տալու կանոնները:

Table with 2 columns: Russian terms and their Armenian equivalents. Includes terms like 'Дисциплинарный', 'Старшим', 'Устав', etc.

ՀՈՎՏԵՄԵՐԻ ԼԵԶՈՒՆ ՕԳՆԵՑ ՌԱԶՄԻԿԻՆ

Երբ Սուրեն Խաչատրյանը եկավ Սովետական Բանակ, ռուսաց լեզվին չէր տիրապետում: Նրա նպատակն էր Սովետական Բանակում դառնալ ռուսերեն գերազանցիկ: Բայց այդ բանին խանգարում էր Հոկտեմբերի լեզուն չիմանալը: Զե՛ որ առանց լեզվին տիրապետելու հնարավոր չէ խորապես ուսումնասիրել զինվորական կանոնադրությունները եվ դառնալ ռուսերեն գերազանցիկ:

Նրան օգնում էր յուրացնել ընթերցանելու: Բացի դրանից, Ս. Խաչատրյանը զիմում էր ռուս ընկերներին, մասնավորապես ավագ սերժանտ Կարապետային, եվ ստանում սպառելի պատասխաններ:

Որոշ ժամանակից հետո Ս. Խաչատրյանն արգեն կարողանում էր ռուսերեն լեզվով պատասխանել հրամանատարի հարցերին, ընթերցել բրոշյուրներ, պատմվածքներ եվ հասկանալ նրանց բովանդակությունը:

Հոկտեմբերի լեզվին տիրապետելու շնորհիվ ազգիկ Ս. Խաչատրյանը դարձել է ռուսերեն գերազանցիկ:

Վ. ՊՈՂՈՍՅԱՆ

ՕՐԻՆԱԿԵԼԻ ԽՈՂԱՐԱՐԸ

Արդեն երկար ժամանակ է, ինչ կրտսեր սերժանտ Գ. Քովմասյանն աշխատում է որպես մեր ստորաբաժանման խոհարար եվ ճաշերը միշտ պատրաստում է ժամանակին, համեղ ու որակով: Նա միաժամանակ զբաղվում է խոհարարներ պատրաստելու գործով:

Իր պարտականություններն օրինակելիորեն կատարելու համար ավագ խոհարար Քովմասյանը բազմիցս արժանացել է խրախուսանքի:

Շաբաթից Լ. ԿԵՎՈՐԿՅԱՆ

Մ Ի Բ Ա Ն Ի Տ Ո Ղ Ո Վ

Մեզմեկ Գ. Համբարձումյանը աշխատում է որպես ավագ խոհարար: Իր պարտականությունները բարեխղճորեն կատարելով, նա միշտ պատրաստում է որակյալ ճաշեր: Բոլոր ուսանողները գոհ են շնորհալի խոհարարի աշխատանքից:

Մեզմեկ Գ. Համբարձումյանը աշխատում է որպես ավագ խոհարար: Իր պարտականությունները բարեխղճորեն կատարելով, նա միշտ պատրաստում է որակյալ ճաշեր: Բոլոր ուսանողները գոհ են շնորհալի խոհարարի աշխատանքից:

Մ. ՄԿՐՏՉՅԱՆ

Մարտական եվ քաղաքական պատրաստության առաջավոր շարքային Ս. Զեպելյանը ամեն անգամ օրապահի պարտականությունները կատարում է օրինակելիորեն: Իր ազնիվ ծառայության համար Զեպելյանը բազմիցս արժանացել է հրամանատարի խրախուսանքին:

Մարտական եվ քաղաքական պատրաստության առաջավոր շարքային Ս. Զեպելյանը ամեն անգամ օրապահի պարտականությունները կատարում է օրինակելիորեն: Իր ազնիվ ծառայության համար Զեպելյանը բազմիցս արժանացել է հրամանատարի խրախուսանքին:

Շաբաթից Ծ. ԽՈՂՎԿՅԱՆ

Մեզմեկները ուշադրությամբ լրանցին ազիտատոր Գիկովի գրույցը՝ նվիրված սոցիալիստական ինդուստրիայի զարգացմանը: Ազիտատորը ցայտուն փաստերի միջոցով ցույց

Մեզմեկները ուշադրությամբ լրանցին ազիտատոր Գիկովի գրույցը՝ նվիրված սոցիալիստական ինդուստրիայի զարգացմանը: Ազիտատորը ցայտուն փաստերի միջոցով ցույց

Կրտսեր սերժանտ Բ. ՊՈՂՈՍՅԱՆ

ԻՐԱԿԱՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՈՐԵԱՅՈՒՄ

ԺՈՂՈՎՐԻԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ԳԼԵԱՎՈՐ ՀՐԱՄԱՆԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՎՈՐԻԱԿՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓեհնՅԱՆ, 12 հունիսի (ՏԱՍՄ).— Կորեական Ժողովրդա - Դեմոկրատական Ռեսպուբլիկայի Ժողովրդական բանակի Գլխավոր հրամանատարությունն այսօր հաղորդել է, որ Ժողովրդական բանակի զորամասերը չինական կամավորների հետ սերտ փոխգործողությամբ բոլոր ուղղամասերում հաջողությամբ ետ են մղում հակառակորդի գրոհները:

Այսօր ինքնաթիռներ ոչնչացնող հրթիռ - կործանիչները ցած են գցել հակառակորդի 4 ինքնաթիռ:

Պատասխանատու խմբագիր՝ Ե. ԿՈՆՅՈՎ

Պատ. խմբագրի տեղակալ՝ Վ. ՎՍՏՐՆՅԱՆ